ԲԱԺԻՆ 3. ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՄՏՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ՀՏԴ 37.015.31 DOI: 10.53068/25792997-2022.3.7-90

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԱՊԱԳԱ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ

ORCID: 0000-0001-6516-9120

Հ. գ. թ., դոցենտ Վ.Ղ. Գեղամյան,
դասախոս Ս.Ս. Արզաքանյան
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան
E.mail: Vardan.geghamyan@sportedu.am
Sona.arzakanyan@sportedu.am

Առանցքային բառեր: Ուսանող, ընդունակություններ, ուսումնական գործընթաց, համեմատական վերլուծություն, զարգացման դինամիկա:

Հետազոտության արդիականություն: Արդի ժամանակաշրջանի կրթական համակարգում իրականացվող շարունակական փոփոխություններն ուղղված են մանկավարժական գործունեության արդյունավետության երաշխիքներն ապահովող գործոնների ձևավորմանն ու զարգացմանը, ինչը շատ կողմերով պայմանավորված է սովորողի մանկավարժական ընդունակությունների զարգացվածության բարձր մակարդակով: Կրթական գործընթացը ոչ միայն իր էական ազդեցությունն է թողնում սովորողի գիտելիքների, հմտությունների և կարողությունների վրա, այլև ձևավորում և զարգացնում է ընտրած մասնագիտությանը համապատասխան ընդունակություններ: Սովորողի գործունեության արդյունավետության մեջ էական դեր են կատարում ընտրած մասնագիտությանը համապատասխան ընդունակությունները, որոնք թույլ են տալիս հաջողությամբ յուրացնել բուհի ծրագիրը և կայանալ որպես մասնագետ:

Ապագա մանկավարժի մասնագիտական գործունեությունը կազմակերպելու և արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է մանկավարժական որոշ ընդունակությունների զարգացման բարենպաստ մակարդակ (կազմակերպչական, հաղորդակցական, կառուցողական, ճանաչողական և այլն): Այդ են վկայում

նաև տվյալ հիմնախնդրի հետ կապված բազմաթիվ հետազոտությունները [2,5,6]:

Այս տեսանկյունից առավել կարևորվում է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ապագա մասնագետների մանկավարժական ընդունակությունների մակարդակի բարձրացման և ժամանակակից պահանջներին դրանց համապատասխանեցման հիմնախնդիրը [1]:

Տվյալ հիմնախնդրի լուծման սկզբնափուլը կարելի է համարել ուսումնառության ժամանակահատվածում բուհում ուսանողի մանկավարժական ընդունակությունների ուսումնասիրումը և զարգացման մակարդակի փոփոխության բացահայտումը: Միայն այդ հիմնահարցի պարզաբանման դեպքում հնարավոր է հիմնավորել և առաջարկել մանկավարժական ընդունակությունների կատարելագործման արդյունավետ ուղիներ [7]:

Հետազոտության նպատակը՝ ՀՖԿՍՊԻ-ի ուսանող մասնագետների մանկավարժական ընդունակությունների ձևավորման դինամիկան և դրանց բովանդակությունների բացահայտումն է՝ ըստ ուսումնառության 4 տարիների:

Հետազոտության նդիրներն են՝

1.Ուսումնասիրել ՀՖԿՍՊԻ-ի ուսանող-մասնագետների առավել կարևոր մանկավարժական ընդունակությունների դրսևորման շարժընթացը:

2. Բնութագրել տարբեր կուրսերում սովորող ուսանողների հաղորդակցական, կազմակերպչական, լսելու և կոնֆլիկտից խուսափելու ընդունակությունների զարգացման յուրահատկություններն ու ձևավորման առանձնահատկությունները:

Հետազոտության մեթոդներն ու կազմակերպումը: Հետազոտական գործընթացում ներառվել են հետևյալ մեթոդները՝ գիտամեթոդական գրականության ուսումնասիրություն և վերլուծություն, միմյանց հետ փոխկապակցված անկետային թեստավորում, մաթեմատիկական-վիճակագրական վերլուծություն:

Հետազոտություններն արդյունավետ կազմակերպելու նպատակով գործնականում կիրառվել է Վ.Վ. Սինյավսկու և Բ.Ա. Ֆեդորիշինի կողմից մշակված կազմակերպչական և հաղորդակցական ընդունակությունների ուսումնասիրման (ԿՕՀ) մեթոդիկան: Ն.Վ. Կիրշևայի և Ն.Վ. Դյաբչիկովայի կողմից մշակված անձի կոնֆլիկտայնության մակարդակի գնահատման թեստը, ինչպես նաև լսելու ընդունակությունն ուսումնասիրող անկետային մեթոդը:

Հետազոտություններն իրականացվել են 2019-2020.ուսումնական տարվա ընթացքում, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի 1-ից 4-րդ կուրսերի տարբեր մասնագիտությամբ սովորող (ֆուտբոլ,

ըմբշամարտ, մարզական պարեր, շախմատ, լող, ծանրամարտ, կարատե և այլն) 200 ուսանողների շրջանում:

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Հաշվի առնելով ոլորտի մասնագետների և մեր կողմից իրականացված երկարատև դիտարկումները՝ առանձնացվել և հետազոտվել են կազմակերպչական, հաղորդակցական, կոնֆլիկտայնության և լսելու ընդունակությունները [1,2,3,4]:

ՀՖԿՍՊԻ-ի ուսանողների հետազոտված մանկավարժական ընդունակությունների ցուցանիշների համեմատական վերլուծությունը՝ ըստ ուսումնառության տարբեր տարիների, փաստում է, որ առաջին և երկրորդ կուրսի հետազոտված ուսանողների ցուցանիշներն իրենց դրսևորման աստիճանով ու բնույթով միմյանցից գրեթե չեն տարբերվում: Երկու խմբում ընդգրկված ուսանողների միջև 4 մանկավարժական ընդունակությունների ցուցանիշների տարբերությունը՝ ըստ Ստյուդենտի սանդղակի (t), էական չեն, բացառությամբ՝ կոնֆլիկտայնության ընդունակության ցուցանիշի, որտեղ գրանցվել է հավաստի ($p < 0,05$) տարբերություն:

Հետազոտված ընդունակությունների շարքում առանձնահատուկ տեղ է գրավում կոնֆլիկտայնության ուսումնասիրումը, քանզի դրա ցածր մակարդակն այն չափանիշերից մեկն է, որը դրականորեն է բնութագրում ֆիզիկական կուլտուրայի ուսուցչին և մարզչին՝ որպես մանկավարժ և դաստիարակ:

Ինչպես տեսնում ենք, 1-ին տրամագրում ներկայացված կոնֆլիկտայնության ցուցանիշը ուսումնառության առաջին և երկրորդ տարիների ընթացքում արդեն իսկ դրսևորում է զարգացման աճ:

Ըստ հետազոտության արդյունքների՝ 1-ին կուրսի ուսանողների մոտ կոնֆլիկտայնության ցուցանիշը համապատասխան մեթոդի վերլուծության չափանիշերի միջին մակարդակի է, իսկ 2-րդ կուրսում այն դրսևորվում է զարգացման միջինից ցածր մակարդակում. որքան փոքր է ստացված ցուցանիշը, այնքան դրական է այն դրսևորվում, այսինքն՝ 2-րդ կուրսում իջնում է ուսանողի կոնֆլիկտայնության մակարդակը: Ենթադրվում է, որ այս փաստը պայմանավորված է հետևյալով. հայտնի է, որ երկրորդ կուրսը համարվում է ուսանողի ադապտացիայի վերջին փուլը, և ուսումնառության երկու տարիների ընթացքում նոր սոցիալական խմբերում ընդգրկվելը, միջանձնային փոխհարաբերություններն ու ադապտացիոն գործընթացն էականորեն կարող են ազդել ուսանողի կոնֆլիկտայնության ցուցանիշների վրա:

Ուսումնառության առաջին և երկրորդ տարիները համընկնում են դեռահասության երկրորդ կամ հասունության

առաջին փուլի հետ, որտեղ ակնհայտ ակտիվանում են հատկապես անձի այն պահանջմունքները, որոնք չեն բավարարվել ավագ դպրոցական տարիքում՝ մեծացնելով կոնֆլիկտայնության հավանականությունը:

Ինչ վերաբերում է մանկավարժական մյուս 3 ընդունակություններին, ապա կազմակերպչական և հաղորդակցական ընդունակությունների ցուցանիշները երկու խմբերում էլ գրանցել են միջին մակարդակ, իսկ լսելունը՝ միջինից ցածր և, ինչպես նշել ենք, նրանց միջև տարբերությունը էական չէ, ինչը խոսում է այն մասին, որ ուսումնառության երկու տարիները դեռ բավարար չեն, որ նպաստեն այս ընդունակությունների զարգացմանը:

Տրամագիր 1

ՀՖԿՍՊԻ-ի ուսանողների մանկավարժական ընդունակությունների զարգացման դինամիկան՝ ըստ ուսումնառության տարիների



Մեր կողմից փորձ է արվել համեմատական վերլուծության ենթարկել նաև 2–րդ և 3-րդ կուրսի հետազոտված ուսանողների մանկավարժական ընդունակությունների ցուցանիշները, որոնք վկայում են, որ հատկապես կազմակերպչական և հաղորդակցական ընդունակությունները զգալի զարգացման են հասնում 3-րդ կուրսի ուսանողների մոտ: Այլ է պատկերը

մյուս երկու ընդունակությունների ցուցանիշների միջև: Այսպես՝ լսելու ընդունակությունը դրսևորել է բավարար, իսկ կոնֆլիկտայնությունը երկու խմբերում էլ՝ միջինից ցածր ցուցանիշ, սակայն եթե միջին թվաբանական տվյալներն ենք դիտարկում, այստեղ 3-րդ կուրսում նկատվում է դրական միտում (տես՝ տրամագիր 1):

Կազմակերպչական ընդունակության ցուցանիշների համեմատական վերլուծությունը ցույց տվեց, որ այն արդեն ուսումնառության 3-րդ կուրսում դրսևորում է զարգացվածության միջինից բարձր մակարդակ և իր դրսևորման աստիճանով ու բնույթով էականորեն տարբերվում է 1-ին և 2-րդ կուրսի ուսանողների միևնույն ցուցանիշներից: Գրեթե նույն պատկերն է գրանցվել նաև հաղորդակցական ընդունակության ցուցանիշների համեմատական վերլուծության միջև, որտեղ նույնպես 3-րդ կուրսում նկատվում է զգալի աճ՝ դրսևորելով միջինից բարձր ցուցանիշ, ինչը նույնպես ուսանողի ուսումնադաստիարակչական գործունեության գրավականներից մեկն է:

Այս երկու ընդունակությունների (կազմակերպչական և հաղորդակցական) զգալի տարբերությունը ենթադրում է, որ այն հատկապես պայմանավորված պետք է լինի 3-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայով, սակայն մանկավարժական պրակտիկայից առաջ և հետո իրականացված ուսումնասիրության արդյունքում բացահայտվեց, որ բացառությամբ հաղորդակցական ընդունակության՝ մնացած բոլորում տեղի են ունեցել դրական տեղաշարժեր: Լավագույն դեպքում ցուցանիշների միջև տարբերությունը մանկավարժական պրակտիկայի սկզբի և ավարտի միջև ընկած ժամանակահատվածում կազմել է ընդամենը 0,5-1 միավոր: Ստացված տվյալները վերաբերում են ընդունակությունների զարգացվածության միջին մակարդակին, որը պրակտիկայի արդյունքում չի փոփոխվել:

Քանի որ չեն հայտնաբերվել հավաստի փոփոխություններ ընդունակությունների միջին ցուցանիշների շարժընթացում, կարևոր էր պարզաբանել՝ արդյո՞ք բարելավվել են միջինից ցածր կամ միջինից բարձր հատվածում գտնվող ցուցանիշները:

Այս հարցի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ, ինչպես և միջին ցուցանիշների դեպքում, պրակտիկայի ընթացքում ուսանողների մանկավարժական ընդունակությունների փոփոխությունները միջինից ցածր կամ բարձր մակարդակներում նույնպես էական չէին, չնայած, որ գրանցվել են ինչպես դրական, այնպես էլ բացասական որոշակի փոփոխություններ: Մասնավորապես, ուսումնասիրված բոլոր ընդունակությունների ցուցանիշնե-

ում գրանցվել են չնչին փոփոխություններ (0,5 – 1 միավոր): Դրական տեղաշարժերը վերաբերում են կազմակերպչական և հաղորդակցական ընդունակություններին: Սակայն բացահայտված փոփոխությունները հավաստի չէին:

Վերոնշյալը փաստում է այն, որ 3-րդ կուրսի մանկավարժական պրակտիկան չի կարող էական ազդեցություն ունենալ մանկավարժական ընդունակությունների զարգացման վրա, սակայն մանկավարժական պրակտիկայի ընթացքում առաջին անգամ ուսանողը գործնականում ծանոթանում է ընտրած մասնագիտության հետ, ինչը խորացնում է մասնագիտական հետաքրքրությունները, մեծանում է անձի հավակնության աստիճանը՝ կապված ապագա մասնագիտության հետ, բարձրացնում է ուսանողի ինքնադաստիարակման պահանջը, որոնց արդյունքում էլ ձևավորվում և զարգանում են համապատասխան ընդունակությունները:

Այնուհետև, համեմատելով 3-րդ և 4-րդ կուրսի ուսանողների հետազոտված ցուցանիշները, պարզ է դառնում, որ 4-րդ կուրսում որոշակի զարգացման աճ է նկատվում միայն կազմակերպչական և հաղորդակցական ընդունակությունների ցուցանիշներում: Երկուսում էլ տարբերությունը, համեմատած 3-րդ կուրսի, հավաստի է ($p< 0,05$) և, ըստ թեստերի արդյունքների՝ պահպանվում է միջինից բարձր մակարդակ:

Կոնֆլիկտայնության և լսելու ընդունակությունների ցուցանիշների միջև էական տարբերություն չի գրանցվել:

Փաստ է նաև այն, որ հետազոտված մանկավարժական ընդունակությունները փոխկապակցված են ինչպես միմյանց, այնպես էլ մյուս ընդունակությունների հետ, քանզի որևէ ընդունակության ոչ բավարար զարգացման դեպքում այն փոխկապակցվում է մեկ այլով, կամ ընդհակառակը, բացասական ազդեցություն է ունենում մյուսների վրա:

Այսպիսով՝ ամփոփելով հետազոտության արդյունքները՝ որպես գիտական նորույթ, կարող ենք նշել այն, որ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ապագա մասնագետների մանկավարժական ընդունակությունների զարգացվածության բարձր աստիճանը կարող է նպաստել՝ իրականացնելու առավել արդյունավետ ուսումնադաստիարակչական գործընթաց:

Որպես **տեսական և կիրառական նշանակություն՝ կարող ենք առանձնացնել ՀՖԿՍՊԻ-ի ուսանողների,** ըստ ուսումնառության տարբեր տարիների, **հետազոտված մանկավարժական ընդունակությունների** կառուցվածքային բնութագրերը, դրանց զարգացմանը նպաստող կիրառական մոտեցումները,

որոնց իրականացումը կապահովի մանկավարժական ընդունակությունների դրական շարժընթացը:

Եզրակացություն: Իրականացված համեմատական վերլուծություններից ու դիտարկումներից ստացված տվյալներով՝ կարելի է եզրակացնել.

1.1-ին և 2-րդ կուրսերում, որոնք համարվում են ուսանողների ադապտացման շրջան, չեն կարող էական ազդեցություն ունենալ ընդունակությունների զարգացման գործում: Սակայն զգալի աճ է նկատվում հատկապես 3-րդ և որոշակի դրական փոփոխություն 4-րդ կուրսերում, ինչը պայմանավորված է հատկապես մանկավարժական և մարզչական պրակտիկայով, տարբեր ուսումնական ծրագրերով, կրեդիտային համակարգի փոփոխություններով, ուսանողի ադապտացիոն խնդիրներով, տարիքային և անձնային առանձնահատկություններով, բուհում տարբեր սոցիալական խմբերում միջանձնային փոխհարաբերություններով, ինչպես նաև բուհի՝ ծրագրով նախատեսված տարբեր միջոցառումներով:

2. Ուսումնառության 4 տարիների ընթացքում, բացառությամբ լսելու ընդունակության, մյուսները զարգանում ու փոփոխություններ են կրում ուսումնական գործընթացին զուգընթաց, և իրենց զարգացվածության մակարդակով, դրսևորման օրինաչափություններով ուսումնառության տարբեր կուրսերում տարբեր են:

3. Ապագա մասնագետի մանկավարժական ընդունակությունների զարգացման գործում էական նշանակություն ունեն ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպումը, նորարարական մոտեցումները, դասավանդման մակարդակը, գիտատեխնիկական հագեցվածությունը, դասախոսի և ուսանողի փոխհարաբերությունները: Մեծ սոցիալականացնող և զարգացնող ազդեցություն ունեն նաև ուսանողական միջավայրն ու ուսանողական, մարզական խմբերի առանձնահատկությունները:

🕮 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արզաքանյան Ս.Ս., Գեղամյան Վ.Ղ., Մանկավարժի անձին ներկայացվող հոգեբանական պահանջները, Գիտությունը սպորտում. արդի հիմնախնդիրներ, Գիտամեթոդական պարբերական, №2, Երևան, 2021, էջ 26-33:

2. Ղազարյան Ֆ. Գ., Ֆիզիկական դաստիարակության և սպորտային պատրաստության դիդակտիկայի հիմունքները, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2009, 111 էջ:

3. Белкин А. С., Педагогическая компетентность. Учеб. пособие / А.С. Белкин, В.В. Нестеров. Учебная книга, Екант. : 2003, – 188 с.

4. Ильина Н. Л., Психология тренера: учеб. пособие. — СПб.: Изд-во С.-Петерб. ун-та, 2016. — 109 с

5. Исаев Е. И., Педагогическая психология : учебник для академического бакалавриата / Е. И. Исаев. — М. : Издательство Юрайт, 2019. — 347 с.

6. Крутецкий, В.А., Педагогические способности, их структура, диагностика, условия формирования и развития: учеб. пособие. – М.: Прометей, 1991. – 112 с.

7. Федотенко И. Л., Туревская Е. И., Югфельд И. А. Подготовка будущих бакалавров физической культуры к превентивной профессионально-педагогической деятельности //Теория и практика физической культуры № 3. 2015, стр. 57 – 61

DYNAMICS OF FORMATION OF PEDAGOGICAL ABILITIES OF FUTURE SPECIALISTS OF PHYSICAL CULTURE AND SPORT

PhD of Psychological Sciences, Associate Professor V. Gh. Geghamyan,
Lecturer S.S. Arzaqanyan
Armenian State Institute of Physical Culture
and Sport, Yerevan, Armenia

ABSTRACT

Key words: Student, abilities, educational process, comparative analysis, dynamics of development.

The article presents the results of a study of the pedagogical abilities of students of Armenian State Institute of Physical Culture and Sports, which can be one of the keys to ensure the effectiveness of professional activity: organizational, communicative, conflict-oriented abilities, and listening skills.

Research aim is to reveal the dynamics and contents of the development of pedagogical abilities of the student specialists of ASIPCS, based on the results of a 4-year study.

Research methods: study and analysis of scientific and methodological literature, survey of interrelated and mutually compensating results, expert assessment, survey-testing, mathematical and statistical analysis.

The research was carried out among 200 students from the 1st to 4th courses of ASIPCS that represented various sports: basketball, volleyball, football, wrestling, sports dances, gymnastics, swimming, there were also k*inesiologists*, sports journalists, etc.

Analysis of research results: Th**e** analysis of the researched abilities of students of ASIPCS revealed, that in addition to the ability to listen, along with the educational process, other significant changes develop and undergo, and the level of their development and patterns of manifestation are different in different courses of study.

Conclusion: Comparative analysis and observations have shown that the correct organization of the educational process, innovative approaches, the level of teaching and the relationship between the lecturer and the student are essential for the development of student abilities. Student environment and peculiarities of student sport teams also have a great socializing and developing effect.

ДИНАМИКА ФОРМИРОВАНИЯ ПЕДАГОГИЧЕСКИХ СПОСОБНОСТЕЙ БУДУЩИХ СПЕЦИАЛИСТОВ ФИЗИЧЕСКОЙ КУЛЬТУРЫ И СПОРТА

К. п. н., доцент В.Г. Гегамян,
преподаватель С.С. Арзаканян
Государственный институт физической культуры
и спорта Армении, Ереван, Армения

АННОТАЦИЯ

Ключевые слова: студент, способности, учебный процесс, сравнительный анализ, динамика развития.

В статье представлены результаты исследования педагогических способностей студентов Государственного института физической культуры и спорта Армении, которые могут стать одними из залогов обеспечения эффективности профессиональной деятельности: организаторские, коммуникативные, конфликтоориентированные способности, умение слушать.

Цель исследования - выявить динамику и содержание развития педагогических способностей студентов-специалистов ГИФКСА по итогам 4-х летнего обучения.

В исследовательский процесс были включены следующие методы:изучение и анализ научно-методической литературы,опрос взаимосвязанных и компенсирующих

друг друга результатов ,экспертная оценка, опрос-тестирование, математико-статистический анализ.

Исследование проводилось среди 200 студентов с 1-4 курс ГИФКСА, представляющих различные виды спорта:баскетбол, волейбол, футбол, борьба, спортивные танцы, гимнастика, плавание, также были кинезиологи, спортивные журналисты и др.

Результаты исследования. Из анализа исследуемых способностей студентов ГИФКСА стало ясно, что, кроме умения слушать, наряду с учебным процессом развиваются и претерпевают существенные изменения и другие, причем уровень их развития и закономерности проявления различны на различных курсах обучения.

Краткие выводы. Сравнительный анализ и наблюдения показали, что правильная организация учебного процесса, инновационные подходы, уровень преподавания и отношения между преподавателем и студентом имеют важное значение для развития способностей студента. Студенческая среда и особенности студенческих спортивных коллективов также имеют большой социализирующий и развивающий эффект.

Հոդվածն ընդունվել է 17. 09. 2022–ին:
Ուղարկվել է գրախոսման՝ 18.09. 2022–ին:
Գրախոս՝ մ.գ.դ., պրոֆեսոր Ռ. Մարդոյան